

հեծեծանաւք. մանաւանդ վասն քաղաքին Արշակաւանին, զի անաւրէնութեամբ եւ չարութեամբ եւ յափշտակութեամբ շինեցաւ բազում մեղաւք:

13 Ապա սուրբ հայրապետն Ներսէս մտանէր առ թագաւորն, խաւսէր ընդ նմա եւ ասէր՝ եթէ Ընդէ՞ր մոռացար զՏէր, եւ թողեր զպատուիրանսս Նորա. զԱրարիչն՝ որ զամենայն յոչնչէ արար, որ հայրն է որբոց եւ դատաւոր այրեաց, որ վասն մեր էջ յաղթատութիւնս, որ ոչ թողու զաղքատս ի ձեռանէ, այլ իւրով մարդասիրութեամբն բուծանէ զնոսա. այլ Աստուած դատաւոր արդար եւ հզաւր եւ երկայնամիտ՝ որ ամենայն տառապելոց ունկնդիր է, եւ զարհամարհանս ուրուք ի յանձն ոչ առնու: 14 Եւ զհա՞րդ կամ ի՞նչ դու ըմբռնեցար արհամարհել զնորա զպատուիրանսն. ո՞չ հայրն քո վասն այսր ամբարշտութեան ի կորուստ մատնեցաւ: 15 Արդ դու տակաւին ջիշեցեր զնա, որ ոչն յիշեաց զմեղս հաւրն քո, եւ ետ քեզ զտեղի ունել, այս ինքն զաթոռ եւ զթագ հաւրն քո. եւ սկսար անաւրինել առաջի Տեառնն Աստուծոյ քո, եւ զամբարշտութիւնս եւ զանաւրէնութիւնս եւ զանիրաւութիւնս կարի ի նմանութիւն սողմացւոցն՝ պարծանաւք յայտնապէս պատմել¹: 16 Եւ երկիր առ հասարակ լան եւ վայեն զրկութեանցն զյափշտակութեանցն, որովք դու կամեցար մեծանալ. եւ ոչ յագեցոյց զքեզ մեծ եւ բազում թագաւորութեանցն յղկութիւնքն, զոր ետն քեզ Տէր ամենայնի Քրիստոս:

17 Արդ լուր ինձ զոր ասեմս քեզ, եւ արա զնա՝ զի մարթասցես շահել զանձն քո, եւ ապրեցուցանել զքեզ ի բարկութենէ անտի Աստուծոյ. եւ մի՛ թշուառական աշխարհս Զայոց յաղագս քո կորիցէ: 18 Այլ ես տեսի տեսիլ, զի կորուստ եւ քանդումն յուզեալ խաղացեալ գայ ի վերայ կորստական աշխարհիս Զայոց այսորիկ: 19 Արդ հրաման տուր՝ ի բաց քակել զտեղին զայն, եւ ցրուեա զմարդիկն՝ զոր ժողովեցեր, զի երթիցեն ցրուեսցին սփռեսցին յիւրաքանչիւր տեղիս, եւ երթիցեն տացեն իրաւունս ում զինչ եւ պարտիցին. զի մի՛ դու ի խորս չարեաց բարկութեանն անգանիցիս կորիցես: 20 Եւ վասն մեղացն՝ զոր գործեցեր, հրաման տացուք ամենայն աշխարհի՝ ընդ քո ի պահս եւ ի խնդրուածս լինել, եւ մեք հանդերձ քեւ յապաշխարութիւն մտցուք. ո՛ր գիտէ, թողու տեր զքո զայդ զանհնարին զմեղսդ գործեալ: 21 Եթէ տեղւոյն ինչ կարի այդչափ ցանկացեալ ես, ես ինքն ինձեն զնա արդարութեամբ շինեցից, եւ շէն կալայց առաջի քո:

22 Իսկ թագաւորն ծաղր առնէր զբանսն կաթողիկոսին, եւ մկթայր զնորա զասացելովքն: 23 Իսկ նա միւսանգամ բարկացեալ, կրկնեալ ասէ. Գիտես, ո՛վ թագաւոր. վասն այսր ամենայնի ասացեալ է կանխասացութեանն ամենայն բերանովք մարգարեիցն, եթէ *Վա՛յ որ շինէ զտուն իւր՝ եւ ոչ արդարու-*

1 Թերեւս պատուել